

ՄԱՅԻՍ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարեկան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առ շաբաթը)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական հաղորդագրութեան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Պարսկաց Ծանր Թիֆլիսում. Նամակ Երևանից. Նամակ Դիլիջանից. Նամակ Բարսիսապարայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժամանակակից Պարսկաստանը.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ժանտախտ չը կայ Անդրկովկասում և Այդ է ասում պաշտօնական հաղորդագրութիւնը, որ մենք հրատարակեցինք «Մշակի» երէկվայ հեռագրների բաժնում և որը կը հանգստացնէ մեր ազգայնական լուրջ մտքերը:

Այն հիւանդութիւնը, որը առիթ էր տուել ենթադրելու, թէ մեր երկրում ժանտախտ է երևացել, որովայնային տիֆ է, որով հիւանդացել էին Չիստուրի գեղում գտնվող մարզանցի հանքերի բնակիչները: Հիւանդութիւնը ստացաւ սուր բնակչութիւն և տեղի տուեց ենթադրելու, որ, գուցէ, երևացել է վարդապետական սարսափելի ժանտախտը: Ենթադրութիւնը տարածվեց իբրև լուր, որ թէ և չը հրատարակվեց մամուլի մէջ, բայց բերանից բերան անցաւ շատ մեծ արագութեամբ: Հափազանց արագ յաւելուեցին:

Շատ ուրախալի է, որ պաշտօնական հաղորդագրութիւնը շուտով ջրեց այդ լուրը: Երբեք և առաջին առաւ զանազան անպատկերացելի միտքերով: Ենթադրութիւնը բոլորովին չի լուրջացել, և ուրիշներ, չը գտան ժանտախտին յատուկ բացիկներ: Բայց և այնպէս մեր երկրի վարչութիւնը ձեռք առաւ շատ խիստ և լուրջ միջոցներ Չիստուրում երևացած հիւանդութեան դէմ մարտաւելու և նրան արմատախիլ անելու համար:

Ժանտախտ չը կայ—դա շատ ուրախալի է: Բայց այն հանգամանքը, որ մի ուրիշ աւելի հասարակ և թույլ հիւանդութիւն կարող է սուր կերպարանք ստանալ, պէտք է գրաւէ մեր հասարակութեան առանձին ուշադրութիւնը և ստիպէ ձեռնարկելու առողջ պահպանման բարեփոխութիւնները մեր ազգայնականութեան կեանքի մէջ:

Երբ որ առողջապահական պայմանները անբավարար են, այն ժամանակ հասարակ ջրեմը, կոկորդացաւորը, որովայնային և բժաւոր տիֆերը դառնում են կատաղի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ ՊԱՐՏԱՍՏԱՆԵԸ

Մեր հարեան երկրի միակեանքը Մուղաֆէր-էդ-դին Շահ Ղաջար, առաջին անգամ հիւր է գալիս մեզ մօտ Այդ առիթից օգուտ ենք քաղում մի համառօտ տեսութիւն ներկայացնելու: «Մշակի» ընթերցողներին Պարսկաստանի ժամանակակից վիճակի մասին: Եւ որովհետեւ առիթը Իրանի և Թուրանի Շահ-հան է—այս ատուղսը դեռ կրում են Պարսկաստանի միակեանքը—ուստի և tout seigneur, tout honneur. Ժանտախտը ուղղակի նրա հետ, մասնաւորապէս որ լրագրողները անհէջ տեղեկութիւններ հաղորդեցին նրա մասին:

I

Պարսկական համայն, էլ-Սուլթան, իրեն-էլ-Սուլթան, իրեն-էլ-Սուլթան, վէ-էլ-Սուլթան, իրեն-էլ-Սուլթան, իրեն-էլ-Սուլթան, ալ-հազարաթ Շահ-հան իրան, Մուղաֆէր-էդ-դին Շահ Ղաջար—ահա այն լիակատար տիտղոսը, որ կը բռնէ և պարսից լահերը Աղա Մուհամմէդ

աղէտներ, որոնք իրում են բազմաթիւ զոհեր ազգայնականութիւնից և դառնում են մի-մի ժանտախտ երկրի համար: Իսկ երբ առողջապահական պայմանները բարելավված են, երբ ազգայնականութեան սր-նունդը բաւարար է, այն ժամանակ նոր իսկ այնպիսի մահաբեր ախտեր, ինչպէս են խոլերան, ժանտախտը, դառնում են համեմատաբար թույլ հիւանդութիւններ, որոնց հետ կարելի է աջողութեամբ կուել: Արդեօք կը գայ մի այնպիսի ժամանակ, որ մենք էլ ունենանք նպաստաւոր առողջապահական պայմաններ և համարձակ կերպով նայենք վտանգաւոր հիւանդութիւնների վրա, հաւատալով, որ մենք կարող ենք յաղթել նրանց հեշտ կերպով մեր կենցաղավարական բարեկարգ վիճակի շնորհիւ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Վատ հասկացված բարեգործութիւնը—մենք շատ անգամ ենք առիթ ունեցել ասելու—յան-ցանքներ և խաբէութիւն է ծնեցնում: Այս իրողութիւնը ապացուցանելու համար մի օրն պ. Միւստոբրեբի հուշարկ է բազմաթիւ փաստեր աշխարհի բոլոր մեծ քաղաքների աղ-թախների կեանքից: «Расс. Вѣд.» լրագիրը բերում է քաղաքացիներ Միւստոբրեբի յօդուածից, և մենք տեսնում ենք, որ մարդկանց բարեգործական զգացմունքները շահագործելու համար ամեն տեղ գործ են դրվում այն-պիսի միջոցներ, որոնք անուշաքն անբարոյա-կան և զգուշի են: Մուրացկանութիւնը իբրև արհեստ յայտնի է ամբողջ դասակարգերի թէ Ամերիկայում, թէ Ռուսաստանում և թէ Չինաստանում: Այս վերջին երկրում մուրաց-կանութիւնը մի ամբողջ դիտութիւն է դար-ձել: Եւ մարդկանց գուլթը շարժելու ու որքան կարելի է շատ ողորմութիւն զգնելու համար գործի են հրաւիրվում ստուծիւնը, խաբէու-թիւնը, գոյութիւնը չունեցող հիւանդութիւն-ները, դիտմամբ անդամալոյծ են անում երե-խաներին, դիտմամբ ձեւանում են կաթնուծա-հար, ջարդված, որպէս զի ուշադրութիւն հարմար Բայց ինչ է դուրս գալիս այս բոլո-րից: Ողորմութիւն տուողը ինչ պիտի անէ, տեղեկանալով այս փաստերին:

Միթէ այս բոլորը նշանակում է, թէ պէտք է անտարբեր անցնել փողոցային մուրաց-կանութեան մօտով և վախճալով, թէ մի գուցէ խաբէութեան առարկայ դառնալը, միթէ դուք բոլորովին կը հրաժարվեք օգ-նելու նրանց, որոնք զգալի տեսք ունեն:

Շահ ներքինուց սկսած և որ նշանակում է, թէ անտարբեր—ամենուրեք. սուլթանը որդի սուլ-թանի, որդի սուլթանի, ինչպէս որդի ինչպէս, որդի ինչպէս, իրանի Շահ-հան, Մուղաֆէր-էդ-դին Շահ Ղաջար:

Յայտնի է, որ հին Պարսկաստանի թագա-ւորները կոչվում էին ինչպէս. սուլթան և ինչ-պէս անունները, որոնք նոյնպէս նշանակում են արքայ, ընդունված են արաբական և մօնղոլ-կան տիրապետութիւնից յետոյ: Տիտղոսի մէջ չորս անգամ որդի (իբն) բառի գործածութիւնը աննպատակ է. այդ նշանակում է, թէ Մու-ղաֆէր-էդ-դին Շահը, Ղաջար հարստութեան հինգերորդ զահակայն է, այն է 1) Աղա Մու-ղաֆէր Շահ արաբ (ներքին), 2) Պաթախ-Շահ, 3) Մահմադ Շահ, 4) Նասրէդդին Շահ և 5) Մուղաֆէր-էդ-դին Շահ: Ստար թա-գաւորները զրազրութեան ժամանակ զրում են «Շահ-հան» իրանի և Թուրանի. այդ տիտ-ղոսն եւ շատ հին է, այն ժամանակից սկսած, երբ ոչ միայն Իրանը, այլ և Թուրանը (Թուրք-ստանը, Անդրկասպական երկրը) գտնվում էր պարսկական տիրապետութեան տակ Այդ լիա-կատար տիտղոսը գործ է ածվում գրքերի գրաւոր դիմումներին, հրովարտականքին մէջ, բայց դէմ առ դէմ խօսելիս, գործ են ածում:

Ի հարկէ ոչ: Արհեստով մուրացկանի կող-քին կարող է ձեռք մկնել և իսկական մուրացկանութիւնը, իսկական զգալիութիւնը, ճշմարտագէտ անկանխի գործիւնը: Միւստոբրեբի բերած փաստերը, ի հարկէ, չեն խառնում, որ կայ և իսկական զգալի-գութիւն, ոչ մի եղ չը գտնող ազգատու-թիւն: Նրա բերած փաստերի միտքը այն է, որ մասնաւոր բարեգործութիւնը պիտի գործադրվի խելացի կերպով, իսկ դրա հա-մար նա պիտի կազմակերպվի:

Կազմակերպել աղքատին օգնելու գործը կարող են բարեգործական ընկերութիւնները, քաղաքային աղքատախնամ հոգաբարձութիւ-նը: Եթէ մարդիկ միջոցներ տային այդ հիմ-նարկութիւններին, կարելի կը լինէր ոչ միայն ինքնին իսկական աղքատներին, այլ և պա-կասեանք մուրացկանութիւնը արհեստ դարձ-րած մարդկանց թիւը: Շատ դէպքերում մաս-նաւոր բարեգործութիւնը, որքան էլ առատա-ձեռն լինի, չէ կարող չը փչացնել մարդկանց, Այսպէս են, օրինակ, փողոցներում մնացած անչափահաս երեխաները, անօգնական որբերը: «С. Петерб. Вѣд.» լրագիրը նկարագրում է մի որբանոց ընկերութեան գործունէութիւն և մենք տեսնում ենք, որ, իրաւ, այդպիսի դէպքերում միայն կանոնաւոր կազմակերպված հիմնարկութիւնը կարող է այդ տեսակ խել-ձերին ինքնին և կրթել: Հարցը հօ միայն այն է, որ անօգնական երեխաները սովից չը կոտորվին: Կայ աւելի ծանր, աւելի պատաս-խանատու գործ—պահպանել այդ անչափա-հասներին հասարակութեան համար:

Ձէ կարելի կարծել—ասում է լրագիրը—որ բոլոր անչափահաս յանցաւորները չար կամքի զոհեր են, որ նրանք ծնված են յան-ցանքներ գործելու պատրաստ, որ ոչ ոք և ոչինչ ընչ չէ կարող նրանց յետ քաշել այդ յանցաւոր ճանապարհից: Այսպէս մտածել չէ կարելի, այսպէս մտածել տմարդութիւն է և նոյն իսկ յանցանք: Եթէ չափահաս մարդն էլ երբեմն, նոյն իսկ շատ յաճախ, փոքր յանցանքների է գնում ոչ թէ չար կամքից, այլ զգալի հանգամանքների հա-մակցութեամբ, կատարելալ անօգնականութիւ-նից զրոյթով, ինչպէս կարելի է պահանջել երեխայից, որ նա աղին լինի և այն դէպ-քում, երբ սոված է, մերկ ու պատառոտու-ն և ոչ ոքից չէ տեսնում փաղաքանք, որը նոյնքան անհրաժեշտ է երեխային, որքան արեւի ճառագայթը—բոլորին: Ոչ թէ չար կամքը, այլ սովը ու կատաղութիւնը հա-րկեր երեխաներից ինքնուրու մղում են դէպի յանցանքներ: Վճռել հարցը չար կամքի, ընծային յանցագործութեան, բարոյական ա-րատաւորութեան մասին, ի հարկէ շատ հեշտ է, նաեւ լուր ճաշից յետոյ սի-րուն անհանգիստ. բայց այդքան հեշտ չէ վճռում հարցը այն մարդը, մասնաւորապէս երե-խան, երբ նա քաղցած է և ձմեռը սառ-չում է փողոցում: Աւելի լաւ է, ինչի հա-կարելի սովին կուշտութեան, ցրտին տա-

միայն զոհ երան, Գրք է լաւ (մատաղ, աշխարհի աղօթատեղ) բառերը: Այսպէս օրի-նակ, երբ մէկը ներկայանում է Շահին, դի-ցուք մի վիզից, մի նազից, մի խան, մի սէյիդ, մի վաճառական, օրապահ փիշիկ տալով (կամերիքներ) բարձրաձայն ասում է, խոր դուրս տալով Շահին. «Վէլլըրը կամենում է Գրք էլ ալէ մի ոտքի փոշին համբուրել: Շահը ձեռքով նշան է անում, որ նշանակում է, թէ կարող է ներս մտնել: Վէլլըրը ներս է մտնում, մի քանի անգամ մինչեւ գետին խոնարհվելով, դուրս է տալիս և լուս սպասում ձեռքերը շարժելու: Կամ «Վուրբայի» (վերաբերում) մէջ թաղցրած: Նա պէտք է սպասէ, մինչեւ Շահն ինքն խօսք ուղղէ նրան: Սովորաբար Շահն ասում է. «Այսօր լաւ եղանակ է: Իսկովի վէ-դըրը պատասխանում է. «Բէլի, Բէլի, դուրբան» (այո, այո, մատաղ լինեմ), դարձեալ խոր դուրս տալով: «Բէլի, Բէլի, դուրբան» պէտք է անել անպատճառ և նոյն իսկ այն ժամանակ, երբ, դիպուք, եղանակը լաւ է. այդպէս է պահանջում էթիկէտը, որի համաձայն Շահը պիտի չէ կարող: Դուրբան թրքական, իսկ Գրք էլ ալէ մի արաբական բառեր են: այդ ցոյց է տալիս, թէ Պարսկաստանի այժմեան արքունիքը որքան հեռացած է հին պարսկա-

լութիւն, հակադրել մեծ չափերով, ոչ թէ մի տա նեակ թաղաւորներին, այլ ամբողջ հաղարների համար, և այնուհետեւ միայն, մի շարք փորձերից յետոյ, վճռել թէ արդեօք մի և նոյն չէ սոված մարդը և ոճրագործը:

Դժբաղդաբար, մեր հասարակութիւնը մի-այն դատողութիւնների մէջ է խիստ, իսկ պարտաճանաչութեան մէջ ամենաթոյրերից թոյն է: Փոխանակ դատու, փոխանակ օղի մէջ բարոյականութեան, բարձր ազնւութեան պահանջներ արձակելու, պէտք էր երկար և հիմնաւորապէս մտածել, որ մեկ ու արիւնցի կազմված մարդուն հարկաւոր է ուտելիք, ջուր, օդ: Այդ ամենատարրական պահանջներից զրկված չէ կարող մարդ լինել, այս խօսքի լիակատար նշանակութեամբ: Եթէ այս պարզ հասկացողութիւնը ըմբռնելու չնորքն ունենա-լինք, որքան և որքան մանուկներ աղատած կի լինէինք փողոցներից և սպանութեան այն կեղտոտ որջերից, ուր ապաստան է որո-նում մարդկանցից մերժված ամէն մի խելոճ երեխայ...

ՊԱՐՏԱՍՏ ՇԱՀԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նորին մեծութիւն պարսկաց Ծանր, իր գալու-տեան առաջին օրը, երկուցեան, պալատի Դե-ղին դահլիճում բարեհաճեց լսել զերեւանցիների 15-րորդ գնդի բալլալ և չնիկներ խմբի կոնցերտը, որ տրվեց կազմվելուստէր Լօբկոյի ղեկավարութեամբ: Կոնցերտին ներկայ էին գե-ներալ-ադիւտանտ Արսենեւ, կառավարչապետ օգնական Ֆրէդէ, Պարսկաստանի մեծ վեզիր Սադրազամը, Շահի միւս մինիստրները, Թիֆ-լիսի նահանգապետ և ուրիշ անձինք: Նորին մեծութիւնը մեծ ուշադրութեամբ լսում էր բալլալ և չնիկները: Նուազած երգերը, կոնցերտից յետոյ նորին մեծութիւնը բարե-հաճեց կանչել իր մօտ խմբի զինուորներից մէ-կին և զննելով նրա գործիքը՝ հրամայեց անել 800, որ և իսկովի կատարվեց: Նորին մեծու-թիւնը մի քանի անգամ հաւանութիւն ցոյց տուեց նուազահանդէսին և վերջում յայտնեց խմբին իր գնահատականութեամբ: Ապա նորին մե-ծութիւնը, գնալով պատկերների դահլիճը, ներ-կայ եղաւ Կառավարչապետի կցորդ-զինուոր-ների պարին, որոնք պարում էին սրբով լեզ-գինկա և ուսական «կազաչօկ» պարը: Կոն-ցերտից յետոյ տեղի ունեցաւ ճաշիկերով: Նո-րին մեծութիւնը ճաշում էր առանձին: Ժաշի ժամանակ նուազում էր զինուորական երաժշ-տական խումբը: Մայնէրի ղեկավարութեամբ:

Երկրորդ օրը՝ կէսօրին, տեղի ունեցաւ նա-խաճաշ, որի ժամանակ նուազում էր Մու-րաչկոյի երեխայական խումբը: Երեկոյեան ժամը 7-ին, պալատի պարսկական դահլիճում տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշիկերով, որին կան սովորութիւններից և իւրացրել է այն էթիկէտը, որ տիրում էր մօնղոլների արքու-նիքում: Այդ պատճառով Ղաջարների հարեա-տութիւնը նշանակում է պարսկի ժողովրդի կողմից, իբրեւ ոչ—ազգային, այլ օտար, իսկ հոգեւորականութիւնը համարում է նրան նոյն իսկ յափշտակիչ, որովհետեւ պարսկական դա-հը համարվում է սեփականութիւն սեփական ցեղի, որ դեռ ջնջված չէ և մինչեւ այժմ եւս զոյուցիւն ունի:

Մուղաֆէր-էդ-դին Շահը, Ղաջարեան հա-րըստութեան հինգերորդ ներկայացուցիչը 47 տարեկան է այժմ: Նա Նասրէդդին Շահի երկ-րորդ որդին է: Պարսկաստանի աւանդական սովորութեան համաձայն, թագաւորող Շահի այն որդին է զահաւատանքը նշանակվում, որի մայրն եւս արքայական ծագումն ունի. այդ է պատճառը, որ Նասրէդդին Շահը զահաւատանքը նշանակեց ոչ թէ իր անդամիկ որդուն, Զիւլ-լը-Սուլթանին, որի մայրը մի հասարակ գեղջիկ է, այլ Մուղաֆէր-էդ-դինին, որի մայրը Շահի գահ-խանութ է, այն է իշխա-նութիւն:

Այդ հանգամանքը մեծ թշնամութիւն առաջ բերեց երկու եղբայրների մէջ: Զիւլլը-Սուլթա-նը երկար ժամանակ, մինչեւ հօր մահը, չէր

ներկայ էին Շահի չքախոսները, գինուորական եւ քաղաքացիական աստիճանաւորներ, որոնց հրաւիրել էր Կառավարչապետի օգնական գեներալ-լեյտենանտ Ֆրեդէ, պարսկական հիւպատոսարանի անդամները հիւպատոսի հետ միասին, նոյնպէս եւ օտարերկրեայ հիւպատոսները: Ծաղկերոյթին մասնակցում էին 150 անձինք: Նորին մեծութիւն Շահը բարեհաճում էր ձախլ իր սենեակներում: Ծաղի ժամանակ պալատի պարտիզում փոխ առ փոխ նուագում էին գինուորական երաժշտական խումբն եւ Արքայ-Բաղին սաղմոսարները: Առաջին բաժակը օտարերկրեայ Կառավարչապետի օգնական գեներալ-լեյտենանտ Ֆրեդէ նորին մեծութիւն Մուղաֆֆէր-էդդին Շահի կենացը: Բոլոր ներկայ եղողները վերկայան տեղերից եւ հնչեցրին դահլիճ «ուրա»-ի աղաղակներով, իսկ երաժշտական խումբը նուագեց պարսկական օրհներգը: Երկրորդ բաժակը Փրանսերէն լեզուով առաջարկեց Պարսկաստանի մեծ վեզիր Սադրազամը Թաղաւոր Կայսրի կենացը, որից յետոյ հնչեցին երկար եւ անլույի «ուրա»-ի աղաղակներ, իսկ այգում երաժշտութիւնը նուագեց «Боже, царя храни»: Ծաղ վերջացաւ 8 ժամին եւ 35 րոպէին:

Պարսից Շահը երեքշաբթի, մայիսի 16-ին, երեկոյեան զնաց արքունական թատրոն: Ծանապարհ, պալատից սկսած մինչեւ թատրոն, լուսաւորված էր գոյնզգոյն լապտերներով, բազմաթիւ կանթեղներով եւ մագաղանների առատ լուսաւորութեամբ: Տները եւ մագաղանները զարդարված էին դրօշակներով: Թատրոնի երկրորդ յարկի ձախակտանի անդայրած էր չքեղ դասաւորակ, որի վրա նկարված էր պարսկական դրօշը՝ արեւը արեգակով: Ամբոխը լցրել էր մայիթներ եւ փողոցի կողքերը: Երեկոյեան ժամի 9-ին Շահը դուրս եկաւ պալատից կառքով եւ ուղղվեց դէպի թատրոն: Կառքի առաջին եւ ետեւի ընթանում էին կողակները լուսավորված ջահերով: Ժողովուրդը ամբողջ ճանապարհին ողջունում էր Շահին ուրաներով: Երբ Շահը մտաւ իր օթեակը, թատրոնում ժողովրդած հանդիսականները ոտի կանգնեցին եւ երաժշտութիւնը նուագեց պարսկական օրհներգը: Շահի հետ մի եւ նոյն օթեակում դեռեղեկներն նրա առաջին մինիստր Սադրազամը, գեներալ Արսենի, Կառավարչապետի օգնական Ֆրեդէ: Հանդիսականները, որոնք հրաւիրված էին յատուկ տոմսերով, պատկանում էին թէ ծառայող դասակարգին եւ թէ քաղաքի մէջ գտնվող հիմնարկութիւնների եւ մամուլի ներկայացուցիչներին: Պարսկերում միայն աղաւթարկի էին նստած, իսկ օթեակներում կային կանայք՝ երեկոյեան զգեստով: Դերասանները, որոնք պատկանում էին Ստեպանովի թատրոնական խմբին, ներկայացրին «Իզմաիլ» պիեսը: Շահը մնաց թատրոնում մինչեւ ներկայացման վերջը, յետոյ նոյն հանդիսով վերադարձաւ պալատ: Ամբոխը սպասում էր փողոցում Շահի դուրս գալուն եւ ողջունեց նրան ուրաներով:

Երկուշաբթի, մայիսի 16-ին, Պարսկաստանի մեծ վեզիր Էմինու-Սուլթան-Սադրազամ, գեներալ-ադիուտանտ Արսենի եւ Պետերբուրգի պարսկական դեսպանի հետ, այցելեց Կովկասի Կառավարչապետի պաշտօնակատար գեներալ-լեյտենանտ Ֆրեդէին:

Մայիսի 16-ին նորին մեծութիւն պարսից

Շահը չորհրդեց գեներալ-ադիուտանտ Արսենի իր ակնակալութեամբ պատկերը՝ պարանոցից կախելու համար:

Երէկ, մայիսի 17-ին, առաւօտեան ժամը 11-ին, Մուղաֆֆէր-էդդին Շահը այցելեց Բուսարանական այգին եւ այն ուղ թէյ խմեց: Ապա ժամը 12-ին, եկաւ Թիֆլիսի Պարսից հիւպատոսարանը, ուր պարսկահպատակ թուրքերը եւ հայերը պատիւ ունեցան ներկայանալու իրանց վեհապետին: Շէյխ-ուլ-իսլամը պարսկերէն մի ուղերձով ողջունեց Շահին: Գալուստը եւ մաղթում կարդաց: Շահը մի քանի հարցումներ արեց հայ եւ պարսկի վաճառականներին տեղական առեւտրի մասին եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ պարսկահպատակներն եւս կարողանում են յայտնի դիրք գրաւել առեւտրական ապաւրդում:

Շահն առաջին ունկնդրութիւն չորհրդեց պալատում Թումանեանց առեւտրական տան աւագ խառնամ Մահմետի Սիւնեյ Թումանեանցին, որը Սադրազամի յատուկ պատուէրով Բագուից եկել էր Թիֆլիս: Ինչպէս յայտնի է, նախկին ուղեգրի համաձայն, Շահն Աղստաֆից պէտք է ուղղակի Բագու գնար: Բագուում նա պէտք է իջնանէր եւ երեք օր հիւր մնար Թումանեանցների տանը, որ Պարսկաստանի նշանաւոր առեւտրական տներէց մէկն է: Թումանեանցների տունը, ինչպէս եւ Բագուաւորական պարսկահայերը չքեղ պատրաստութիւններ էին տեսել արժանաւոր կերպով ընդունելու իրանց վեհապետին: Ուղեգրի փոփոխութեան պատճառով Շահը չը կարողացաւ Բագու գնալ, բայց նա իր արքայական շնորհակալութիւնները յայտնեց Մահմետի Ս. Թումանեանցին եւ ասաց, որ նա, առհասարակ, շատ գոհ է իր հպատակ հայերից, գնահատում է նրանց հաւատարմութիւնը եւ ցաւում է, որ չը կարողացաւ չօչափել կերպով յայտնել իր գոհունակութիւնը, իջնանելով Թումանեանցի տանը: Շահը բարեհաճեց ժամաւորապէս իր գոհունակութիւնը յայտնել եւ Թումանեանց առեւտրական տանը, որը, ասաց նա, իր առեւտրական գործառնութիւններով մեծ օգուտ է բերում Իրանին: Շահնաւոր խոստացաւ վերադարձին անպատճառ Բագու գնալ եւ ընդունել իր հպատակ հայերի կողմից պատրաստած աղ ու հացը:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻԺ

Մայիսի 12-ին

Վերջապէս ամբարտաւանութիւնը խորտակվեց: Երէկ վեհապետ Կաթողիկոսի հրամանով թեմական դպրոցի տեսչութիւնից արձակվեց Բենիկ վարդապետը, թէպէտ հրաժարականի ձեռով: «Դպրոցը ազատվեց այդ մարդուց», լքում է ամէն մէկի բերանից: Ուրախ են ամենքը, բայց 5 ուսուցիչներից, որոնք Բենիկի ձեռքում գործիք դառնալով, վերջին ֆինալում չուղեցին իրանց պատրուկին թողնել եւ խմբական հրաժարական տուին, չը ստանձնելով, որ զբաղւելով կրթական ուրախութիւն են պատճառելու երեւանցիներին:

Բենիկ վարդապետը, Երեւան օտք դնելու օրից, բոլորովին այլ դիրք ուղեց բռնել՝ ժողովարարի որ մի 2—3 տարի առաջ վերակայուէր այդ դպրոցում: Օղեսայից բերած մեծամորութիւնն վրա աւելացաւ մի նոր մեծամորութիւն, որովհետեւ այժմ թեմական դպրոցի տեսչ

աւել էր եւ այն էլ լիազօր իրաւունքներով: Կէ որ այդ իրաւունքը նոյն իսկ քարը կը ծախէր կանցներ: Եւ ահա Բենիկ վարդապետը մտնում է իր դերի մէջ, ուսուցիչներին սեղմում է իր «ղալիքի» մէջ, սպասում է անմիջապէս արձակել իրան չը հնազանդողին եւ երկու ուսուցիչ վերաբերմամբ կատարում է իր սպառնալիքը: Լիազօր իրաւունքներից վախում են նոյն իսկ հոգաբարձուները: Աշակերտների մէջ մտցվում է ձեւարանի մէջ տիրող ոգին, մէկը հետեւում է միւսին, ընկերը ընկերին լրտեսում է: Ժողովրդի մէջ դնալով դժգոհութիւնը միմեանում է:

Բայց Բենիկը ցանկանում է նաեւ առաջնորդարանը իր ձեռքը ձգել ու նկատում է մի գործ, որը իր կեղտոտութեամբ ամբողջ քաղաքի խօսակցութեան առարկան էր ամիսներով: Այս բոլորը մի առ մի էլ միմեանին Կաթողիկոսին է հասնում եւ մինչդեռ Կաթողիկոսը սպասում էր արձակուրդներին, որ Բենիկին հեռացնէ, վերջինս իր ճարպիկութեամբ մարդիկ էր որոտւում Կաթողիկոսի մօտ ուղարկելու, որ իր տեղը ամբարշնէ եւ առաջնորդին տապալէ: Մասամբ այդ շարժառիթից դրդոված, մասամբ իր քաղաքագիտական հանձնարը ցոյց տալու եւ մի շարք մարդկանց դուր գալու նպատակով, նա ընկնում է մի ամբարտաւանութեան մէջ, որը եւ նրա անկման պատճառը դառաւ: Մինչդեռ Շահը դեռ սահմանին էլ չէր հասել եւ Կաթողիկոսն էլ էլ միմեանում նստած էր, Բենիկը միառէ է յղանում Շահին այցելու համար՝ պատուաւոր քաղաքացիներից սովորական կազմով Կաթողիկոսի համար, եւ ահա առ ու նա, ի հարկէ դիրք ունեցողներից, գրաւոր հրաւեր են ստանում Բենիկից այդ նպատակով: Գտնվեց նոյն իսկ միամիտի մէկը, որը մինչեւ անգամ փողպատ ու ձեւնոց էլ գնեց: Իսկ առաջնորդարանը ոչինչ չը գիտէր: Եւ ահա Կաթողիկոսը գալիս է Երեւան, այդ ամբարտաւանութիւնը բացվում է եւ Կաթողիկոսը հրամայում է Բենիկին չուլ եւ փախաւ հաւաքել, էլ միմեանին գնալ դեռ ուսումնական տարին չը լրացած: Այսպէս ընկաւ մեծ ամբարտաւանը:

Վերջին շարժառիթը ընթացում մեծ քանակութեամբ անձրեւներ տեղացին, համարեա, մեր նահանգի բոլոր կողմերում: Եւ ինչպէս եւրեւում է, անձրեւների հետ տեղի են ունեցել կարկուտներ. այդպիսի կարկուտ տեղացել է Իգդիրում, բայց այն կարկուտը, որ այսօր ժամը 12—1-ին տեղաց Երեւանի վրա, դժուար թէ չատերը տեսած լինեն: Երկրաշիջ թափվում էր ոչ թէ կարկուտ, այլ ուղղակի սառուցիկ սոթերի. կարկուտը տեղաց բաւական երկար, մեծ-մեծ եւ ասարտիկի ուժով: Բաւական ապակիներ կոտորատեց, շատ տներ ջրով լցվեցին, ծառերը ճղքալիտոր եղան, այգիները, համարեա, ամբողջապէս ոչնչացան: Վնասը հասնում է մի քանի հարիւր հազարի, այդեւեղները ուղղակի սգի մէջ: Դեռ եւս վրանանների համար ձիւղ տեղեկութիւններ չեն ստացված: Պատմում են $\frac{3}{4}$ ֆունտ ծանրութիւն ունեցող կարկուտ մասին, որը թափվում էր խաղողի մասերի վրա:

Անցնալ կիրակի նորակառուց եկեղեցում հոգեհանգիստ կատարեցին մեր անմահ նկարիչ Ալլադովիկու եւ յայտնի բարեգործ Բուդաղեանի մահվան առիթով:

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻԺ

Մայիսի 14-ին

Պարսից Շահի ընդունելութեան պատրաստութիւնները Դիլիջանում սկսվել էին մայիսի 1-ից: Այդ օրվանից գտնվում էին այստեղ Գանձակի նահանգապետը, մեր գաւառապետը եւ ուրիշ աստիճանաւորներ, որոնք անձամբ կարգադրում եւ կառավարում էին պատրաստութիւնները:

Շահի ընդունելութեան համար նշանակված էր տեղիս պատահաւորական կառավարիչ պ. Բաքրաձէի բնակարանը: Այն փողոցը, ուր գտնվում է այդ բնակարանը՝ երկուստեք զարդարված էր երեքգունեան սիւներով եւ դրօշակներով: Սիւները միացնում էին մշտադալար շամու եւ եղեւնի ոտների հիւսուածքներ, իսկ դրանց յետեւ շարժար պատած էին կանաչադարձ դալար ճիւղերով: Աւելի եւս ճաշակով եւ գեղեցիկ զարդարված էր Շահի ընդունելութեան համար նշանակված տան ճակատը—գեղեցիկ պատշգամբը, կանաչեայ եւ ծաղկեայ հիւսուածքներով եւ մանր գունաւոր դրօշակներով: Փողոցի զվրին ճաշակով կառուցված էր յաղթական կամար, որը զարդարված էր գորգերով, կանաչներով եւ ճառագայթաձեւ ոսկէ-արծաթազոյն արդ ու զարդով: Կամարի վերեւում, աղեղի զվրին, շատ բարձր, սաղցրած էր ուսական երկգլխեան արծաւանդը: Իսկ կամարի վրա ոսկեգուն խոշոր տատերով գրված էր «Добро пожаловать»: Մնացած երկու կամարները նոյնպիսի չեղուցութեամբ պատրաստված էին, որոնցից մէկը, բնակարանի մուտքում, «МОЛОСТИ ПРОСИМЪ» մակագրով, իսկ վերջինը փողոցի ծայրում ողջերթ մաղթելու համար, «СЧАСТЛИВЫЙ ПУТЬ» մակագրով:

Երէկ, մայիսի 13-ին, կեսօրից սկսած նկարագրված փողոցի երկու կողմերում տեղ էին գրաւել Արդահանեան դուռը եւ յատկապէս Շահին դիմաւորելու համար եկած կողակները: Ահաւար ժողովուրդը Դիլիջանից եւ չրջակայ գիւղերից, լցրել էր հանդիսաւոր փողոցի երկու կողմերը, պ. Բաքրաձէի տան դէմը, հայտն գերեզմանատունը, տները տանիքները եւ պատշգամբները: Հայոց գերեզմանատան հովանոցը նոյնպէս զարդարված էր դրօշակներով եւ վեհեղելով: Որի վրա պարսկերէն կարմիր տատերով գրված էր «Մուղաֆֆէր-էդդին Շահ Իրանի», իսկ ներքեւում՝ «ուսերէն» «М. Զ.», բայց արանից գրված էր՝ «10 мая 1900 г.»:

Երկու պալատեց յետոյ, մայիսի 13-ին, երեկոյեան ժամի 7 $\frac{1}{2}$ -ին, գինուորները եւ ժողովրդի որոտածայն «ուրանները» աղաբարեցին Շահի մօտենալու: Նրա փակ կառքը կանգ առաւ միջին կամարի առաջ, դուռը բացվեց եւ ցած իջաւ Շահը:

Թարգմանի պաշտօն էր կատարում, եթէ չեմ սխալվում, գեներալ-ադիուտանտ Արսենի: Վերջինս ներկայացրեց Շահին Գանձակի նահանգապետին, տեղական գնդապետին, պաշտօնական զեկուցումից յետոյ Շահը ողջունեց զօրքին եւ փոխադարձ ընդունեց. ապա սկսեց զօրքի օրկեստրը նուագել պարսկական հիններ, որի ժամանակ զօրքը անդադար «ուրա» էր կանչում, իսկ նորին մեծութիւն պարսից Շահը ողջունելով ման գալիս զօրքի առաջ:

Հասաւ ժամը եւ Շահը ներս մտաւ միջին

կամենում հաւաքել այն մտքի հետ, որ ինքը, լինելով հօր անդրանիկ զաւակը, չը պէտք է թաղաւորէ. նա մինչեւ անգամ մի յատուկ սուր էր պատրաստել տուել եւ անունը դրել «Մուղաֆֆէր-ըուլ» (Մուղաֆֆէր-սպան), մըտաղիք լինելով եղբոր հետ կուել թագի համար, բայց Նասրէդդին Շահը անյողողող մնաց եւ այնքան զսպեց անդրանիկ որդուն, որ նա վերջ ի վերջոյ ընկճվեց եւ խնայրվեց: Եղբայրն եւս, ի բնէ բարեխաղ լինելով, երբ գահ բարձրացաւ, մոռացաւ աւագ եղբոր վարձումը, ներքեւ եւ ամենեւին չը դիմեց այն անցուկ միջոցներին, որոնց գիտում են սովորաբար արեւելքի վեհապետները իրանց վրտանաւոր աղապարհների վերաբերմամբ, կուրացնելով կամ ներքինանքով նրանց:

Սակայն ինքը Մուղաֆֆէր-էդդին Շահը առաջինը եղաւ, որ ջնջեց դարեւոր աւանդական սովորութիւնը: Բարձրանալով Իրանի գահի վրա, նա թագաժառանգ նշանակեց ոչ թէ իր երկրորդ որդուն, Մէլիք-Մանսուր միրզային, որի մայրը չափազե-խաւն է. այլ իր անդրանիկ որդուն՝ Մահմադ-Ալի միրզային, որի մայրը թէեւ նշանաւոր Ամիր-Նիզամ միրզա Թաղի խանի աղջիկն է, բայց չափազե խանում չէ: Որքան էլ բողոքեց Մէլիք Մանսուր միրզան, դատ կանչեց, մատնացոյց եղաւ իր

իրաւունքների վրա, բայց հայրը, որ մի եւ նոյն ժամանակ ջերմ կերպով սիրում է նրան, չը փոխեց վճիռը եւ ստիպեց նրան, ի նշան համաձայնութեան, կնքել այն ֆիրմանը, որով Մահմադ-Ալի միրզան վախաղ (գահաժառանգ) է նշանակվում: Գլխաւորապէս երկու հանգամանք ստիպեց Մուղաֆֆէր-էդդին Շահին ջնջել աւանդական օրէնքը. դրանով, նախ, նա կանցաւ վերջ գնել գահի տիրապետութեան իրաւունքի մասին եղբայրների մէջ շարունակ ծագող կոիւնքերին. երկրորդ, ինչպէս հաւատացնում են շատերը, զբանով նա կամեցաւ քաւել այն մեծ անարդարութիւնը, որ իր հայրը գործել էր միրզա Թաղի խան «մեծ Ամիր Նիզամ» կոչված առաջին մինիստրի դէմ, ինչպէս եւ այն անարդարութիւնը, որ ինքը, վախաղ եւ երիտասարդ ժամանակ, գործել էր այդ Ամիր Նիզամի աղջկայ դէմ, որ իր առաջին եւ մի ժամանակ սիրեցեալ կինն էր:

Յայտնի է, որ երբ Նասրէդդին Շահը գահ բարձրացաւ, նրա առաջին մինիստր կամ Սադրազամ դարձաւ միրզա Թաղի խանը, որ եւրօպական ձգտումներով ու գաղափարներով ներշնչված մարդ էր ու մաքուր գրել էր արժատականապէս վերանորոգել Պարսկաստանը: Նա ունէր վերանորոգչի մեծ ձիրք ու պատ-

րաստութիւն. երիտասարդ Շահը կատարեալ վատանութիւն ու անկեղծ համակրութիւն էր տածում դէպի նա, եւ, ի նշան սիրոյ, փեսայացրեց իրան, ամուսնացնելով իր քրոջ հետ: Վերանորոգչական գործը սկսվեց. Ամիր Նիզամը սկսեց խորհուրդի, փչրել ամեն բան, կաշառականները, հարստապարիչները հալածվում էին անխնայ եւ արտաքսվում: Ինքը երիտասարդ Շահը շատ անգամ ստանում էր յանդիմանութիւն, կշտամբանք, երբ փոխանակ պարագելու պետական գործերով, անձատուր էր լինում հաւրեմական եւ այլ գոււարձութիւններին: Բոլոր կեղեքիչները, խաւարի մէջ գործողները դեռ նաւորվեցին Ամիր Նիզամի դէմ, իսկ պայքար սկսեցին մղել եւ ամեն ջանք գործ դրին նրան տապալելու: Նրանք փախում էին Շահի ահանջին. «Ղուրբան, սա աշխատում է ինքը Շահ լինել. զուրբան, սա քեզ համար հոր է փորում. զուրբան, ամեն տեղ լսվում է միայն Ամիր Նիզամ անունը, ոչ ոք այլ եւս չէ արտասանում Նասրէդդին Շահի անունը»: Այս փափոցը իր ազդեցութիւնը գործեց անփորձ Շահի վրա: Ամիր Նիզամը աքսորվեց Բեաշան. նրան հետեւեց իր կինը, Շահի քոյրը, բայց արիւստիւր կնոջ ներկայութիւնը չը կարողացաւ ազատել Ամիրին մահից... Շահի հրամանով, նրան ստիպեցին բաղնիքում երակը

բանալ եւ արիւնաքամ լինել: Նրա մահվամբ մարեց Իրանի աստղը. խաւարը նորից տրեց, նոր չնուրթիւնը կործանվեց, հինը վերականգնուվեց: Շուտով բմբունեց Շահը իր գործած ահագին սխալը. կամենալով միթիսի քրոջը, նա պատկեց իր որդի եւ գահաժառանգ Մուղաֆֆէր-էդդինին Ամիր Նիզամի անշահաւան աղջկայ հետ, որը, այդ ձեռով, պէտք է Պարսկաստանի ապագայ թագուհին լինէր: Տառն եւ հինգ տարեկան հասակում ամուսնացաւ Մուղաֆֆէր-էդդինը. աղջիկը 12 տարեկան էր: Երբ չափահաս դարձաւ, լսեց մօրեց իր հօր: Ամիր Նիզամի աղիտաւոր մահը, նրա սիրուր դառնութեամբ եւ վրէժ-ինդրութեամբ լցվեց. նա չը սիրեց իր ամուսնուն, նկատելով նրա մէջ միայն իր հօր սպառնիչի որդուն. նոյն իսկ Մահմադ Ալի միրզայն ծնունդը չամբեց, չը շինեցրեց նրա վրէժիւնը: Բուրբան կրակը եւ Մուղաֆֆէր-էդդինը ստիպվեց արձակել նրան կնուրթիւնից: Արձակված կինը Թաւրիզից դնաց Թէհրան եւ այդտեղ սկսեց այնպիսի կեանք վարել, որ Նասրէդդին Շահը միանգամայն աչքից ձգեց նրան. յուսահատ կինը մի քանի անգամ մարդի դէնաց, զանազան ամուսիններ փոխեց ու վերջ ի վերջոյ մի նպարավաճառի կին դարձաւ:

(Նը շարունակվի)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.